Փայտի արատներ

Փայտի արատները առանձին հատվածների թերություններն են, որոնք վատացնում և սահմանափակում են փայտի տեխնոլոգիական մշակման որակը և դրանց օգտագործման հնարավորությունները:

Տարբերում են երկու տեսակի արատներ՝

1. սկզբնային (աճող ծառերի վրա),
2. երկրորդային (գոյանում են դրանից պատրաստված շինվածքների վրա):

Փայտի արատները լինում են՝

- բնական (խոպոպուկ, կարճաբունություն, շեղաշերտություն, ոստեր),
- մեխանիկական վնասման (խեժակալուկ, չորակողություն, վնասվածք, անհարթ),
- միջատներով, բակտերիաներով, սնկերով վարակված (փչակ, փտածություն, կարմրափտածություն),
- տեխնոլոգիական մշակման հետևանքով առաջացած շեղումները (ճաքեր, կորացում):